

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ

ՆՅՈՒՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Հինգերորդ դարի մատենագիրների շարքում իր առանձնահատուկ տեղն ունի Ղազար Փարպեցին: Մեծ չէ Փարպեցու մատենագրական ժառանգությունը՝ «Պատմութիւն հայոց» և «Թուղթ առ Վահան Մամիկոնեան», բայց անգնահատելի է նրա դերը հայոց պատմության մի որոշակի ժամանակաշրջանի (387-400-ական թվականների վերջ) բազմաթիւ ուսումնասիրության համար, որը և պատճառ է դարձել նրա՝ հետազոտողների ուշադրության կենտրոնում հաճախ հայտնվելուն (Մ. Նալբանդյան, Վ. Լանգլուա, Գ. Խալաբյան, Գ. Տեր-Մկրտչյան, Մ. Աբեղյան, Ս. Մելիք-Բախչյան, Վ. Յուլգաշյան, Պ. Մուրադյան և ուրիշներ): Սակայն նրանք բոլորը Փարպեցու «Պատմութիւնը» դիտարկել են միայն IV դարի վերջի - V դարի հայոց պատմության քաղաքական, կրոնական անցքերի հենքի վրա՝ նրան ներկայացնելով որպես կրոնական գործիչ և պատմական հարուստ իրադարձությունների հմուտ մեկնաբանող:

Միքայել Նալբանդյանը, Ղազար Փարպեցուն համեմատելով Տակիտոսի հետ, գրում է. «Փարպեցու «Պատմութիւնը» շատ տեղ և մեծ մասով նմանություն ունի Տակիտոսի հոյակապ տարեգրությանց և մեզ թվում է, թե այս համեմատություն էր ամենամեծ գովասանությունը, որ կարող էին տալ Փարպեցու Պատմության, առանց վախենալու ելքոպական գիտության դատաստանից»²:

Այլ է մեր մոտեցումը: Մենք փորձում ենք նրան ներկայացնել վաղ միջնադարյան նյութական մշակույթի տեսանկյունից: Իսկ մշակույթի հենքի վրա Փարպեցու մատյանն անսպառ զանձարան է ուսումնասիրողի համար. հանքագործություն, արհեստ և արհեստագործական արտադրանք, կենցաղ և սովորույթ, տարագ և պերճարվեստ, ծես և ավանդույթ, գենքեր «հարկաներ սուսերաւ», «զիսատել սրով» և զորատեսակներ. «Գունդը ի զօրացն Մարդպետական այրուածիոյ»³, վերջապես կիրա-

¹ «Մեղադրություն ստախոս արեաներին», թարգմ. և բացատրությունք՝ **Մ. Նալբանդյան**, ՍՊԲ, 1868: **V. Langlois**, Collection des historiens anciens et modernes de l'Arménie, t. 2, Paris, 1899. «Ղազար Փարպեցու Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան», աշխատութեամբ **Գ. Տեր-Մկրտչյան** և **Սու. Մալխասեան**, Տիգիս, 1904: «Ղազար Փարպեցի եւ գործք նորին», **Գ. Խալաբյան** ի Սոսկուա, 1883: **Սու. Մելիք-Բախչյան**, «Ղազար Փարպեցի»- Հայ մշակույթի նշանավոր գործիշները 5-10-րդ դդ., Եր., 1976: **Պ. Սուրարյան**, **Վ. Յուլգաշյան**, «Ղազար Փարպեցու նորահայտ պատառիկը», Բանքեր Մատենադարանի, 11, Եր., 1973: **Պ. Սուրարյան**, Ղազար Փարպեցի, «Հանդէս Ամսօրեայ», 2002 թ. 1-12, Վիեննա-Երևան, 2002, էջ 209-228: **Վ. Յուլգաշյան**, Ռուսական պատմութիւն Հայոց, Ս. Էջմիածին, 1999:

² «Ղազար Փարպեցու գրած թուղթը», թարգմ. **Մ. Նալբանդյան**, Ս. Պետերբուրգ, 1868, էջ 371:

³ Ղազարայ Փարպեցու պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1908, էջ 135:

ոական արվեստն իր բոլոր դրսնորումներով, «զուկի և զպղինձ և զերկաթ և զպատուական քարինս, զոր ընկալեալ արուեստող ձեռաց՝ զարդարեն զթազաւոր մեծատեսիլ զարդեօրն յօրինուածովըն, զոր ի խոյրսն և ի թագնս և ի հանդերձեսն յուլէհուու պաճուճեալս ընդելուզանեն»⁴:

Միջնադարյան Հայաստանում գործող ամենահարգի արհեստներից մեկի՝ դարբնության, այդպիսի մանրակրկիտ նկարագրություն, ինչպիսին Փարպեցունն է, հազվադեպ է մեր մյուս մատենագիրների մոտ. «Ունելով ընդ ինքեանս բազմութիւն դարբնաց գործովը արուեստատրութեան իւրեանց, սալիւր և ուռամբք, կռանօր և խարտոցովը, խարտել և ի բաց հանել զերկարսն ի ձեռաց և յուտից և ի պարանոցէ սրբոցն, և զոր ոչն կարասցեն կտրել խարտոցօրն՝ուռամբք շարդեալ գրեւու երկարոյն, դնելով ի վերայ սալիցն, բեկեալ հանցեն ի բաց»⁵:

Նյութական մշակույթի տարատեսակ արտահայտությունների վկայակոչման գունեղ օրինակ է Սահակ Պարթենին վերագրվող տեսիլը: Այս միայն ծիսական, ազգագրական միջավայրի պատկերագրում չէ, այլև մարդկային ստեղծագործ մտքի ձեռակերտ արարումների, նյութական արժեքների բազմաքնն դրսնորությունների հարուստ մի հիշատակարան, ի զորու հարստացնելու մեր գիտելիքներն ու պատկերացումները ժամանակի արհեստների (ոստայնանկություն, փայտամշակություն, ներկագործություն, գրչություն և այլն) ու արհեստագործական լյանքի բազմակողմ ընդգրկումների վերաբերյալ. «...Եւ ի վերայ բեմբին երևեր տետրասկեզ յուկոյ սրբոյ՝ խորանարդ... ծածկեալ յոյժ բարակ կտաւով սպիտակափայլ գունով:... Եւ կայր ի վերայ բեմբին սեղան չորեկուսի, ականակապ, ի բազմագունի ականց պատուականաց ընդելուզեալ»: «Եւ ընդ ահեկէ բեմբին տեսի արոռ մի բարձր չորեկուսի, ծովագոյն սառնակերպ. և ծածկեալ թանձր կտաւով թխագունիւ... տեսի սկուտեղ արծաթի մեծ: Եւ ի վերայ սկտեղն կայր նափորս մի բեկեզեայ..., և մազադար..., գրեալ ոսկետեսի գրով սքանչելապէս, իբր թէ ձեռամբ գրչի ճարտարի: Եւ կիսազիր կարգին մինչև ցմիջոց գրոյն՝ ևս առաւելագոյն էր ոսկով, և այլն կարմրադեղով էր: Եւ կային շուրջ սկուտեղն անդիր բազմութիւնք տղայոց, այլ սակաւ և իզաց, ամեներեան պայծառացեալք լուսազգեստր էին: Բայց ճառագայթք փայլատակման պատմուանաց նոցա՝ էր որ կարմրագոյն արձակէին նշոյլս, և էր որ այլ երփին երփին և գոյնս ազգի ազգիս երևեր»⁶:

Շնորհիվ Փարպեցու վկայությունների, մենք այսօր կարող ենք խոսել և վաղ միջնադարում կենցադավարող ու իրավական նորմի ուժ ունեցող զարդարանքի առարկաների մի որոշակի խմբի, այս է՝ կնիք-մատանիների, դրանց հարուստ տեսականու և դրանք կրող պատկան անձանց իրավունքների վերաբերյալ: Կնիք-մատանիները, ըստ Փարպեցու, կրել են հայոց հոգեստր բարձրատիճան հայրերը՝ կաթողիկոսներն ու եպիսկոպոսները, իշխանները, տանուտերերն ու սեպուհները. «և

⁴ Անդ, էջ 21:

⁵ Անդ, էջ 198:

⁶ **Փարպեցի**, Տեսիլք Սրբոյ Սահակայ Պարթենի, էջ 61-62:

կնքեալ նախ մատանեալ իշխանին Սիւնեաց Վասակայ և ապա մատանեօր ամենայն տանուտերացն Հայոց և աւագ սեպհացն»⁷:

Իսկ Հայոց Հայրապետները կրել են հատուկ կնիք-մատանիներ, այն էլ աջ ձեռքի մատնեմատին. «և դիր զմատանին, զգծած խաչի քո, ի մատին աջոյ ձեռին մերոր»⁸:

Կնիք-մատանիներ, այն էլ՝ խաչպատկերով, հայտնի են Դվինի պեղումներից (ՀՊՂԹ 1677/239) և Երևան քաղաքի տարածքից: Եզակի և առանձնահատուկ զարդ է Երևանի տարածքից գտնված կնիք-մատանին⁹, որը շնորհիվ հայերեն արձանագրության և սասանյան կնքարվեստին բնորոշ հարդարանքի, կարող է մեծ հետաքրքրություն ներկայացնել գիտական շրջանակների համար:

Մատանին բոլորչի ակնաբնում կրում է միջին մեծության մուգ կարմիր գույնի գարողոն քար (նոնաքար կամ կարկեհան)` եզերված հայերեն արձանագրությամբ, կենտրոնում՝ զծաքաշ խաչպատկեր: Մատանուն յուրահատուկ շուրջ է հաղորդում կնաքարը հարդարող փորագիր թռչնապատկերը՝ փասիան, գուցե և աղավնի: Արձանագրությունը ընթերցվում է «Աւգնութիւն ինձ ի + [Խաչէ]»¹⁰: Իսկ խաչը, կարելի է ասել, չայ Առաքելական Եկեղեցու, հայոց հավատքի հիմնաքարն է. «Պաշտօն և երկրպագութիւն մատուցիսմա անբաժանելի, վասն զի աստուածային զօրութիւնն օրինութեամբ և օժմամբ ներկայ է իւր պատկերի ու անուան մեջ»¹¹:

Մատանին թեև ծագում է սասանյան պաշտոնական շրջանակներից, կարող էր պատկանել և հայազգի հոգևոր ու բարձրաշխարհիկ բարձրաստիճան պաշտոնյայի, որպես բարձրագույն իշխանության նշանակ. «Եւ ես Բարգէն Հայոց Կաթողիկոս և ամենայն եպիսկոպոսունք և Վարդ Մամիկոնեան գրեցաք հայերեն և պարսկերէն և կնքեցաք մերով մատանեաւ»¹²:

Փարպեցին հիշատակություններ ունի և ճարտարապետական շինությունների վերաբերյալ: Ճիշտ է, այդ հիշատակությունները հպանցիկ են, բայց և խոսուն են: Օրինակ, դրանցից մենք իմանում ենք, որ Վաղարշապատում եղել են «զբարձրաբերձ շինուածս անբիւ ապարանացն», իսկ Աշտիշատում Սահակ Պարթև Կաթողիկոսի համար կառուցվել է «հանգստարան», նրան կից եկեղեցի, մեծապայծառ և «վկայարան՝ սրբոց», զարդարված մեծագին և «պատուական» սպասքով¹³:

Փարպեցին ճարտարապետական շինությունների սոսկ նկարագրող չէ, նա երբեմն փորձում է մեկնաբանել դրանց նշանակությունը, որը կարծում ենք, թե հաջողվել է նրան: Թերևս ոչ ոք հայ իրականության մեջ, բացառյալ Եզնիկ Կողբացու, այնպես չի թափանցել զրադաշտականության էության մեջ, այնպես դիպուկ չի բնու-

⁷ Անդ, էջ 132:

⁸ Փարպեցի, էջ 131:

⁹ Է.Խորշումյան, Հ. Ակոպյան, Սասանյակի զօրությունը և արքայությունը Հայաստանում (V-VII), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XVIII, Եր., 1999, էջ 182:

¹⁰ Անդ, էջ 184.

¹¹ Արշակ Տէր-Միքայելեան, Հայաստանեաց Սուրբ Եկեղեցու քրիստոնեականը, Տիգրանակերտ, 1900, էջ 524:

¹² Գիրք Թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 47:

¹³ Անդ, էջ 24, 77:

թագրել սասանյան պաշտամունքային շինությունները, ինչպես Փարպեցին կրակի տաճարները նկարագրելիս. «ի տուն մոխրանոցին», «որ ընդ կրակի փառս դնեն և տէրութիւն, և ձեզ ըստ կողմն ելեալ սակաւ մի՝ միզեն ի կրակն, և յանթեղ զաղբ իւրեանց արկանեն, ի կրել արտաքս զաւելորդ թրքածու մոխրատացն» կամ «ամենայն նիւթք երկրի աստուածք, ապա թէ այդպէս զիտէք, ընդէր կուրացեալ մտօք զկէս մասն անուանէք աստուածք, և զկէսն յաղտեղի զործ ծախեալ թշնամանէք, որպէս յաղիւտց և ի քարանց զկէսն ապարանս շինէք, և զկէսս տունս դաշտանաց և աղտեղութեան շինէք. և յարձաքոյ զկէսս բմպէլիս կազմէք, և զկէսս անօթս աղտեղութեան կազմէք: Հրով՝ աստուածոցն զարշառս եւ զոշխարս խորովէք և եփէք, և ջրով՝ զդաշտանա և զքարախս և զաղբս լուանայք, և զկէսս առանձինն և կամ իսարնեալ ընդ զինի՝ բմպէք, և զարհովիք»¹⁴ և այլն:

Փարպեցին սոսկ մտացածին նկարագրող չէ: Այսօր նրա վկայություններից շատերը վավերացվում են հնագիտական պեղումներով: Կարելի է վկայակոչել միայն մեկ փաստ:

470-ական թթ. Դվին է տեղափոխվում Հայոց Հայրապետական Աթոռը: Քաղաքը շուրջ չորս հարյուր տարի հայոց հոգևոր կենտրոնն էր: Դվինի կաթողիկե եկեղեցուց հարավ-արևմուտք կառուցվում է առաջին կաթողիկոսարանը կամ հայրապետական պալատական հուշարձանախոսմբը, որը վաղ միջնադարյան Հայաստանի դասական հուշարձաններից է¹⁵:

Պալատի հատակագծային հորինվածքի կենտրոնը այունազարդ սրահն է, որը մուտքերով կապված է բնակելի և տնտեսական կից սենյակների հետ: Պալատական շինությունը կանգուն է մնացել շուրջ մեկ հարյուրամյակ: Քանդվել և հրդեհի է մատնվել 572 թ. պարսիկների դեմ հայերի՝ կրտսեր Վարդանի ապստամբության ժամանակ, որպէս պղծված շինություն: Պալատի ավերակման հիմնական պատճառը նրա արևմտյան թեում կրակապաշտական մեհյանի առկայությունն էր, որը կառուցվել էր պարսիկների կողմից, Սուրեն մարզպանի թելադրանքով, հայոց հավատքի սրբությունները ջնջելու, երկրի երեսից վերացնելու նպատակով: Փարպեցին այդ մասին վկայում է. «իսկ մողուցն զունդը ստիպով բռնադատէին տանել զկրակս ի տաճար սրբութեանց Տեառն, և յայլ յականաւոր և ի գեղեցիկ տեղիս շինել ատրուշանս»¹⁶:

Կաթողիկոսական պալատի արևմտյան թևի շինության կենտրոնում 1979 թ. պեղումների միջոցին բացվեց երեք խոշոր քարերից կազմված քառակուսի մի հարթակ ($1.5 \times 1.5 \times 0.3$ մ), որը ծածկված էր մոխրի հաստ շերտով, իսկ քարերի արտաքին մակերեսները կրակից ձաճքված էին: Հարթակի կողքին ուղղահայց դիրքով դրված էր մոխրով լի մի մեծ կավանոր (բարձ.՝ 1 մ):

Հարթակը կենտրոնում ուներ քառակուսի գոգավորություն: Բացվել է մի խա-


¹⁴ Փարպեցի, էջ 111, 172, 301: **A. A. Կալանտարյան**, Новые материалы о дворцах раннесредневековой Армении, II междуд. симпозиум по Арм. искусство, Ер., 1978.

¹⁵ Փարպեցի, էջ 118:

¹⁶ Անդ:

բիսի (հյուսիս-արևելյան), որը ենթադրել է տալիս, թե շինությունը եղել է այունագարդ (քառասյուն): Նույն խարսխի կրկնօրինակը գտնվել է քիչ հեռու կառուցված IX դ. շինության շարվածքում և կրում է V դ. բնորոշ մանրամասներ: Հարավային պատը, որը շատ վատ է պահպանվել, իր մեջ ունի երկու որմնախարիսխ:

Նյութերի և ճարտարապետական մանրամասների քննությունը փաստում է, թե բացված շինությունը գրադաշտական մեհյան է (կրակի տուն), իսկ հարթակը՝ ատրուշան կամ ատուրաշան (պարթեներեն - վառվող կրակի տեղ): Հարթակի քառակուսի գոգավորությունը հուշում է, որ այստեղ կանգնեցված է եղել քառակող այուն, որի



վրա դրված հատուկ անոթի մեջ վառվել է սրբազն կրակը. «*և կարգել բեռնակիրս փայտակրաց ի պէտու կիզման զաստուածոյն անյազի*»¹⁷:

Սասանյան մեհյանի աղոթարահի արևմտյան պատը բացելու միջոցին, պատի երկարությամբ բացվեց տասը աստիճաններից բաղկացած սանդուղք, որն իջնում էր դեպի նկուղանման կառուց: Դատելով սանդուղքի չափերից (իստրությունը մոտ 4.5 մ) և աստիճանների քանակից, կարելի է ասել, որ այն կրող շինությունը եղել է երկիարկանի մեծածավալ մի կառուց, որը հավանաբար կառուցվել է VII դ. սկզբներին և ավերվել մինչև IX դ.: Շինության պեղածո տարածքը ծածկված էր խճով և ոսկրա-մոխրախառն հողով, որն, ամենայն հավանականությամբ, կապվում էր ատրուշանի գոյության փաստի հետ: Համաձայն գրադաշտական հավատքի՝ «հանգանակի» օրը մի քանի անգամ ջրով ցողում էին սրբազն տարածքը, կատարում հատուկ ծիսական արարողություններ, զոհաբերություններ, ծխարկում և լվացում: Մորթվող անասունների ոսկրոները, որպես սրբազն մասունք, չէին թափում, այլ թաղում էին շրջակայքում. «*և ի կրել արտաքս զաւելորդ թրքածս մոխրոցացն՝ ձանձրացուցանէ զզազախադէմ բզկրողսն պակշոտեալս*»¹⁸:

Նույնը վերաբերվում էր և սրբազն կրակից առաջացած մոխրին. «*ռամիկ զօրացն բազմութիւնն դիմեցին ի սոուն մոխրանոցին, և առեալ զկրակարանն՝ վարեցին ի ջուրսն զկրական, որպէս ի զիրկս եղբոր, ըստ ասելոյ սուտ վարդապետացն*

¹⁷ Անդ:

¹⁸ Անդ:

պարսից¹⁹:

Սովորական շերտերի հարևանությամբ գտնվել է կարմիր փայլաներկով, յուրահասությամբ հորինվածքի ջրամանի կափարիչ, որն, ամենայն հավանականությամբ, պատկանել է ատրուշանի կողքին տեղադրված խոշոր ջրամաններից մեկին: Կափարիչն իր կերտվածքով սերտորեն առնչվում է սասանյան հոգևոր խեցեգործական մշակույթի բազում նմուշների հետ և կրում է այդ ինքնատիպ արվեստի բնորոշ արտահայտչամիջոցներ²⁰:

Որպես ամփոփում կարող ենք միայն փաստել՝ Փարպեցու տեղեկությունները ճշգրիտ են ու արժանահավատ, և դրանցից շատերն այսօր վավերացվում են հնագիտական պեղումներով ու գտածոներով (հարյուրների հասնող զինատեսակներ, զարդեր, անգամ խաչպատկեր մատանի), որոնք մեզ հնարավորություն են ընձեռում նորովի գնահատելու նրա ժառանգության պատմա-մշակութային արժեքը, իսկ այս տեսանկյունից անգնահատելի է Փարպեցու «Պատմության» դերը Հայաստանի վաղ միջնադարյան նյութական մշակույթի հետագա ուսումնասիրությունների բնագավառում:

¹⁹ Անդ, էջ 132:

²⁰ **Ն. Հակոբյան**, Դվինի կենտրոնական թաղամասի 1990-1993, 1999 թթ. պեղումների արդյունքները, Հին Հայաստանի մշակույթը, XIII, Եր., 2005, էջ 206-207: